

## Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ  
Երևան Պլազա բիզնես կենտրոն  
ՀՀ, ք. Երևան 0015  
Գրիգոր Լուսավորչի 9  
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC  
Yerevan Plaza Business Center  
9 Grigor Lusavorich Street,  
Yerevan 0015, Republic of Armenia  
T + 374 10 50 09 64/61

«Յունիքոմփ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Յունիքոմփ» ՓԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պարասխանադրությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### *Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին

լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

  
Արմեն Հովհաննիսյան  
Տնօրեն



  
Լիլիթ Արաբաջյան, FCCA  
Առաջադրանքի պատասխանատու

3 օգոստոսի 2021թ

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
<b>Ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	220,200	231,308
Ոչ նյութական ակտիվներ		807	807
Հետաձգված հարկային ակտիվներ	5	35,276	14,891
Կապակցված կողմերին տրված փոխառություններ	6	222,609	300,302
		<u>478,892</u>	<u>547,308</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	266,803	258,345
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	82,571	117,642
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	23,619	78,932
		<u>372,993</u>	<u>454,919</u>
Ընդամենը ակտիվներ		<u><u>851,885</u></u>	<u><u>1,002,227</u></u>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
<i>Կապիտալ և պահուսպներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	10	50,100	100
Կուտակված վնաս		(72,723)	(144,233)
		<u>(22,623)</u>	<u>(144,133)</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Երկարաժամկետ բանկային վարկեր	11	203,305	208,771
Շնորհներ		22,374	-
Վարձակալության գծով պարտավորություններ	12	175,309	191,109
		<u>400,988</u>	<u>399,880</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս	11	293,433	334,727
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	164,287	390,355
Վարձակալության գծով պարտավորությունների ընթացիկ մաս	12	15,800	14,104
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		-	7,294
		<u>473,520</u>	<u>746,480</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u><u>851,885</u></u>	<u><u>1,002,227</u></u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. օգոստոսի 3-ին:

Արմեն Բալդրյան

Գործադիր տնօրեն



Կարինե Զախարյան

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ.	2019թ.
		դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պայմանագրերից հասույթ	14	1,334,658	2,039,755
Վաճառքի ինքնարժեք	15	(1,071,664)	(1,686,253)
Համախառն շահույթ		262,994	353,502
Այլ եկամուտ	16	39,885	68,616
Իրացման ծախսեր	17	(55,634)	(62,803)
Վարչական ծախսեր	18	(135,512)	(144,551)
Այլ գործառնական ծախսեր	19	(31,230)	(60,031)
Գործառնական գործունեությունից շահույթ		80,503	154,733
Ֆինանսական ծախսեր	20	(82,383)	(160,666)
Ֆինանսական եկամուտ	20	66,268	124
Փոխարժեքային տարբերությունից (վնաս)/օգուտ, զուտ	21	(10,160)	4,803
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		54,228	(1,006)
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	22	17,282	(23,622)
Տարվա շահույթ/(վնաս)		71,510	(24,628)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		71,510	(24,628)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	100	(119,605)	(119,505)
Տարվա վնաս	-	(24,628)	(24,628)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(24,628)	(24,628)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100	(144,233)	(144,133)
Տարվա շահույթ	-	71,510	71,510
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	71,510	71,510
Կապիտալի համալրում	50,000	-	50,000
Գործարքներ սեփականատերերի հետ	50,000	-	50,000
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50,100	(72,723)	(22,623)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ/(վնաս)	71,510	(24,628)
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն	30,324	28,125
Տոկոսային ծախս	82,383	160,666
Տոկոսային եկամուտ	(189)	-
Շնորհից եկամուտ	(3,968)	
Շահութահարկի գծով (փոխհատուցում)/ ծախս	(17,282)	23,622
Փոխարժեքային տարբերությունից վնաս/(օգուտ)	10,160	(4,803)
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>172,938</u>	<u>182,982</u>
Կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների փոփոխություն	77,693	18,639
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	39,243	(13,763)
Պաշարների փոփոխություն	(8,458)	17,477
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(231,571)	(54,130)
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<u>49,845</u>	<u>151,205</u>
Վճարված տոկոսներ	(56,519)	(86,880)
Վճարված շահութահարկ	(10,397)	-
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված/(ստացված) զուտ դրամական միջոցներ</i>	<u>(17,071)</u>	<u>64,325</u>

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(19,216)	(9,089)
Տոկոսային եկամուտ	189	-
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զույգ դրամական միջոցներ</i>	<u>(19,027)</u>	<u>(9,089)</u>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կապիտալի համալրում	50,000	-
Վարձակալության գծով պարտավորության մարում	(36,000)	(12,769)
Բանկային վարկերից մուտքեր	496,315	550,593
Բանկային վարկերի մարումներ	(524,595)	(526,679)
<i>Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված/ (ստացված) զույգ դրամական միջոցներ</i>	<u>(14,280)</u>	<u>11,145</u>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ (նվազում)/աճ	(50,378)	66,381
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(4,935)	(6,396)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	78,932	18,947
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	<u>23,619</u>	<u>78,932</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: